



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Այս գիրքը տպագրված է 1873 թ.

ԹԻԻ 56

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՑԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՔԻԱՐՔԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Ա.Չ.Մ.Ա.ՅԻՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

ԲԸՑՈՒՄՆ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ՅԻՍՈՒՆԸՎԵՅԵՐՐՈՐԴ

26 ՅՈՒՆՎԱՐ 1873



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

ՏԳԱԳՐՈՒԹԻՒՆ

ԸՍՄԸ ԱԼԹԸ ՄԵՄԼԸ ԽԵՆ

1873

ԵՆՊԷԱՆՍԻՐ ԽՈՒՆՈՒՄ

ԲԱՅԻՒՄ 1870 ՄՄԷՆ


ՆԻՍՑ ԺՁ.

26 ՅՈՒՆՈՒՄ 1873

ՆԱԽԱԳԱՀ. — ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԲ.
ԱՏԵՆԱՊԵՏ. — ՏԱՏԵԱՆ Յ. ԷՓԷՆՏԻ (Բ. Ստեփանյան)

ԿԱՐԳ ԽՆԴՐՈՅ

1. Վաւերացումն նախորդ ատենագրութեանց :
2. Կոնգակ Վեհափառ Կաթողիկոսի :
3. Ատենական կանոնադրութիւն :
4. Կաթողիկոսական եւ Պատրիարքական յարաբերութիւնք :
5. Առաջարկութիւն տասն եւ եօթն Երեսփոխանաց Սահմանագրութեան վերաբեր-
նութիւնը Մասնաժողովի մը յանձնելու համար :
6. Տեղեկագիր Ազգամարտի Կաթողիկոսական ինդրոյն :



Ատենը բացուեցաւ ժամ 8 ին , մինչ-
դեռ 46 երեսփոխանք ներկայ էին , եւ տակա-
ւին մեծադոյն մաս չէր գոյացած , սակայն ընդ
հուպ ժողովն իւր անդամոց մեծամասնութիւնն
ուճեցաւ , որոց թիւը 59 ի հասաւ ի վերջէ :

1. ՎԵՐԵՐԵՑՈՒՄՆ ԵՐԵՎԱՆԻ ԱՏԵՆԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Ժողովոյ նախորդ նիստերու զիջուած ա-
տենագրութիւններն անցեալ 53րդ նիստին ալ
մէկտեղ տպագրութեամբ հաղորդուած էին ե-
րեսփոխանաց , եւ գիտողութիւն ունեցողները
զրով իրենց գիտողութիւնները մատուցած էին
զիւանին : Ատենապետ էֆէնափն գրաւոր
գիտողութիւնները ներկայացուց ժողովին , սա-

կայն ժողովն անոնց ընթերցումն աւելորդ հա-
մարելով այս աւուր նիստի ատենագրութեան
մէջ արձանագրել արժան գատեց . իսկ 33, 34,
եւ 35րդ նիստերու ատենագրութեանց համար
ըստ որում գիտողութիւն եղաւ թէ անագան
հատած են երեսփոխանաց ձեռքը , անոնց քըն-
նութիւնն ու վաւերացումը ուրիշ անգամի
թողուեցաւ :

Ահաւասիկ նոյն գրաւոր գիտողութիւններն .

Ա.

ԽԱ. Նիստի 618 երեսի վերջի տողին մէջ
ես այս կերպն առաջարկած էի թէ՛ ճնդհանուր

նուրի : Այս կերպով Բաղաքական ժողովը իրօք խորհող, հսկող, եւ համարաու ժողով կը լայ, եւ միանգամայն Ազգին եւ Բ. Գրան մէջ եղած յարաբերութիւնքը կը կարգադրէ Սրբազան Նախագահին հետ սէկտեղ : Քաղաքական ժողովոյ պաշտօնը այժմ չիօթ վիճակի մէջ է : Ահանքի հանգամանաց պահանջումներն ու Գաղաքական ժողովոյ տեսած գործերը քննելով կը տեսնենք թէ գործադիր իշխանութեան բնութիւն ունի Գաղաքական ժողովը, իսկ Սահմանադրութիւնը քննելով կը տեսնենք թէ Գաղաքական ժողովոյ վերաբերեալ յօդուածները խառնաշփոթ են եւ իրարու հակասական, այսինքն Գաղաքական ժողովը երբեմն գործադիր է, երբեմն հսկող, խորհող եւայլն : Բաց յայդման՝ Սահմանադրութիւնը՝ Գաղաքական ժողովով Պատրիարքին, եւ Տեսուչ Խորհուրդներով Գաղաքական ժողովին իշխանութիւնն ու գործունէութիւնը այնպէս կապած կաշկանդած է, որ եթէ Սահմանադրութեան այդ տրամադրութիւնները իրօք աշխատեն, ըսես, անկարելի կը լայ գործ մը տեսնել : Ահա այս յօդուածը բաւական ապացոյց է ըսածիս : Տարակոյս չկայ թէ այս անպատեհութիւնները շարժանք մըն չեն, եւ միանգամայն անստուգան է առաջ եկած են, եւ կը յուսանք թէ վերաքննութեան միջոցին կը բարձուին :

Ռմանք կը տեսն թէ ուրիշ ազգաց օրինակին հետեւելու չէ, եւայլն : Իրաւ է որ Անգլիոյ կամ Ամերիկայի Սահմ. աննել եւ Հայոց մէջ աշխատելու գործադրել կարելի չէ, բայց նամասպէս շատ ծագրելի է պնդել թէ՛ մեզ Հայոց համար դատ թուաբանութիւն, դատ ֆէշէն, չէ՞ եւայլն տեղեկուէ, ուրիշ ազգաց օրինակին չհետեւելու համար : Սորկական հետեւողութենէ զգուշանանք, բայց գիտնանք նաեւ թէ պատմութեան խրատները ամէն ազգաց համար են, եւ շատ խեղճ ու ազգա ազգ ըլլալու ենք մենք որ անսոցմէ օգուտ չի քաղենք :

Ես ալ կը փափարիմ որ խնդիրը շուտով լուծուի, ուստի վերջին խօսք մընեմ : Գաղաքական ժողովը իր իրական վիճակէն առնելով գործադիր իշխանութիւն է կրօնի, եւ այդ հիման վրայ կառավարիլի որ անոր կազմութիւնը Սրբազան Պատրիարքին յանձնուի : Այժմ Գաղաքական ժողովը իրբեւ խորհող եւ հսկող

ժողով կընդունիմ, երբ անոր տեղ Տեսուչ խորհուրդները գործադիր իշխանութեան ճիւղեր ճանչցուին եւ իրենց կազմութիւնը Սրբազան Պատրիարքին յանձնուի : Բայց խօսք տուած եմ ընկերներու այս անգամ որ եւ է արգելք չհանել Գաղաքական ժողովոյ ընտրութեան դէմ, ուստի ես ալ կը պնդեմ որ անոր անգամոց ընտրութիւնը Ընդհանուր ժողովէն ըլլայ անպատճառ, որովհետեւ կը գուշակեմ որ եթէ անոր ընտրութիւնը Ս. Պատրիարքին յանձնուի, ամէն ձախող դէպք այս պարագային պիտի վերադրեն : Այս առթիւ վերասին կը կրկնեմ այն առջի առաջարկութիւնս թէ՛ Ընդհանուր ժողովը պէտք է Սահմանադրութեան վերաքննութիւնը անմիջապէս ձեռք առնու. որուն համար իսկ ինք վերակազմուած է : Վերաքննութեան եզանակին վրայ ժամանակին կը խօսիմ :

(Ստորագ.)
Հ. Իգէշեան

Գ.

Այս անգամ երկար միջոցի մէջ հրատարակեալ ատենագրութեանց վրայ պէտք եղած գիտողութիւնն ընել զժուարիւն ըլլալով միայն հետեւեալ քանի մը գիտողութիւնները կընեմք, որոնք աչքի զարնող բաներ են :

Նիստ ԽԶ. երես երկրորդ (թուանամար չկայ) : էջ Բ. Առաջարկութեանց Մասնագրողը Սահմանադրութեան 36-37 յօդուածոց վերաքննութիւնը իրբեւ առաջարկութիւն ներկայացուցեր է, բայց 36րդ յօդուածը կայ զբնուած, եւ 37րդ յօդուածը չկայ, որ պէտք է յաւելնայ : Այդտեղու համար չկողմ հոս արձանագրել :

Նիստ ԽԹ. երես 720, էջ Բ. երրորդ խօսքիս վերջը պիտի կցուի : « Մանաւանդ թէ նիստը գոցուելու ժամն անցած, եւ ոչ նիստին շարունակութիւնը կանխաւ որոշուած եւ ոչ ալ երեսօխտանաց կանխաւ ծանուցուած է համեմատական քուէարկութիւնն այսօր ըլլալիքը » :

Նիստ ԾԱ. երես 740 էջ Բ. « Ամենէն մեծամուր պարիսպներն անգամ » խօսքն ըսկիզբ մ'ունի, առանց անոր թերի է, զոր չեմ յիշեր :

Նիստ ԾԲ. երես 756 էջ Բ. իմ եւ Պէկեան Էֆէնտի մէջ ծագած խօսակցութիւնը թերի է, եւ (ուր) բառն ալ արդէն կը ցուցնուէ : Հին Ատենագրութեան իրբեւ թէ ըսած ըլլայ ինձ թէ « Գարձեալ կը հրատարակուի գէնգ եւայլն » : Ասի ետքէն յաւելուած մ'է, եթէ Ատենագրութեան իր պարտքը կատարած ըլլար, Պէկեան էֆէնտին ալ յաջորդ նիստին չէր կրնար բողբել :

(Ստորագ.)
Ս. Փշեպետեան

Դ.

Այսօր ընդունելութեան ենթարկեալ ատենագրութեանց վրայ իմ գիտողութիւնքս նախընթաց ԾԵ. նստի մէջ արուած որոշման համեմատ՝ աւասիկ կը ներկայացնեմ :

ԽԳ. նստի մէջ, յորմէ բացակայ էի հիւանդութեան պատճառաւ, ինչ իրբեւ Ատենագրութեան ժողովոյն՝ ատենագրութեանց յապաղման համար բացատրութիւն ուղղելու խօսքեր եղած են : Երեսօխտանաց իրաւունքն էր այդ բացատրութիւնն ուղղել եւ իմ ալ պարտաւորութիւնս է տալ :

Արդ՝ նախ ճշդել հարկ է որ զիշեալ ատենագրութեանց մէջ ԽԶ. ԽԷ. ԽԸ. ԽԹ. ԽՁ. եւ ԽՐ. նստերուն համար միայն պատասխանատու ե. ես : Ի բաց թողլով խմբագրութեան առթիւ ծագած զժուարութիւնք, որք թերեւ ժողովոյն առջեւ արգարացուցիչ պատճառ չը համարուին, վերահաս հիւանդութիւն մ'արդիւլած էր դիս նախ՝ ասոնցմէ առաջին շրջան հրատարակութեանն զբաղելու : Այդ հիւանդութիւնն է, որ արդիւլեց դիս նաեւ ԽԳ. ԽԸ. ԽԹ. եւ ԽՐ. նստերէն բացակայ մնալու : Իսկ վերջին երկու նստերուն յապաղումը կրնամ ըսել թէ՛ բնաւ իմ վերայ չը ծանրանար : Թէ անոնց անթերի խմբագրութեանը եւ թէ արպագրական կանոնադր շարունակութեանը համար նախընթաց նստերու ատենագրութիւնք պէտք էր ի լոյս եկած լինէին. որոց ոչ ատենագրութիւնն իմն էր եւ ոչ ալ հրատարակութեան պարտաւորութիւնը : Թէ ինչո՞ւ յապաղեցան անոնք, ժողովը ինձ չհարցնէր զայն : Արդ՝ իմ երկու ատենագրութեանց սակաւ ինչ

անագան հրատարակութեան պատճառն ալ ահաւտակ պարտաւորութեան էր : Այսու ամենայնիւ իմ պաշտօնն ու պատասխանատուութիւնս այդ պաշտօնին ու պատասխանատուութեան հետ շփոթելէ խորշելով, յիշեալ ԽԶ. եւ ԽԷ. նստերու ատենագրութիւնքը յաջորդ Ծ. նստեան յառաջ՝ տպագրեալ երեսօխտանաց հաղորդելու եւ նոյն նստին մէջ, որ ասկէ հինգ ամիս յառաջ անցեալ օգոստոս 23 ին՝ դումարուած է, ժողովոյ ընդունելութեան ներկայացնելու պարտաւորութիւնս կատարած եմ ես : (Տե՛ր ելե՛ք 727 էջ Բ.)

Այս հակիրճ բացատրութիւնը տալէ ետեւ, երբ կը յիշեմ որ իմ պաշտամանս կատարման համար երբէք այլոց ազդարարութեանը չեմ սպասած, որ հիւանդութեան անկողնոյս մէջ անգամ երբեմն անով զբաղած եմ, երբ կը յիշեցնեմ մանաւանդ ժողովոյն որ իրբեւ Ատենագրութեան միայնակ էի հիւանդութեան մէջ եւ ատենագրութեան ամբողջ հոգն իմ վերայ ծանրացած էր, որ հիւանդ վերանորոգումն ահա անգամայն խնդրանայն հակառակ ժողովս ընդ երկար յետաձգած էր, չեմ կրնար հանդուրժել ընապէս որ իմ կամքէս անկախ պարագաներու համար ես կամ հիւանդի նախորդ անդամները պարտազանց համարուին : Աւստի կը բողբեմ որովհետեւ գրեալ թուանոց 727-732 բառին դէմ, զոր Տ. Ղեւոնդ վարդապետ գործածած է, յերես 661 էջ Բ. ինչպէս նաեւ ամեն նմանօրինակ իմաստ ունեցող խօսքերու դէմ, եթէ արտասանուած են :

Նիստ ԽԵ. երես 675 եւ նիստ ԽԶ, երես 715, մոռցուած է նշանակել թէ ես հիւանդութեամբ արդիւլեալ էի նոյն նստերուն ներկայ լինելէ :

Նիստ Ծ. երես 728 էջ Ա. Իգէշեան էֆէ, ուղեց իմանալ թէ ի՞նչ պատճառաւ ԽԶ. եւ ԽԷ. նստերու ատենագրութիւնք կը հրատարակուին եւ զեռ եւս ԽԳ. ԽԸ. եւ ԽԹ. նստերունը չեն դար ի լոյս : Ասոր պատասխան ինձ չէր վերաբերեր : Ասիայն Գրիստոստուր էֆ. ի ուշադրութիւնը (նոյն երես էջ Բ) գիտովին ԽԶ. եւ ԽԷ. նստերու ատենագրութեանց երեսներուն թուագրեալ չլինելուն վրայ գարձաւ եւ այս պատճառաւ անոնց հրատարակութիւնը պակասաւոր համարեց : Եթէ լրէի այս ակնարկութեան կամ լաւ եւս ձրի

ամբաստանութեան անգիւ, թերեւս կատարած հրախրէի վրաս. ուստի նոյն աւուր խոստանաւորս համեմատ, թէ երբ փոզուին ատենագրութեանց խնդիրը նկատողութեան առնու' պատասխանեմ Քրիստոստուր էֆ. ի, անաւասիկ պատասխանս:

Նմ պարտքս էր, իմ պատասխանատուութեան ներքեւ եզոզ ատենագրութիւնքն հրատարակել. կարծեմ ժողովն ալ զայս կապակել ինէ: Արդարեւ ինձ ալ փախարհելի էր որ նախընթաց նստերու ատենագրութիւնքը տեսնելէ ետեւ տպագրութեան սայի գանձը, բայց այդ մասին նոյն նստերու Ատենագրութիւն քանիցս ազգարարութիւն ընելէ եւ իմ քսղաքաւարական պարտքս կատարելէ ետեւ, ոչ կը զիջանէի անոր զլացման պատճառը քրքրել եւ ոչ ալ կրնայի Քրիստոստուր էֆ. վնեղով ատենագրութեանց անյապաղ ի լոյս երնելու կարելորութիւնն երեսներու թուագրեալ վնեղութեան որութեան մէջ խնդրել: Կը կարծէի որ Քրիստոստուր էֆ. ալ աւէն ողջամիտ երեսփոխանաց պէս զիտեղով հանդերձ թէ ատենագրութիւնք պատուութեան մասն կը կազմեն, աւելի գոհ պիտի լինէր նոյն երկու նստերու 14 թերթէ բազմաթիւ ատենագրութեանց երեսներն իւր ձեռքը թուագրել, բայց զանոնք որ յառաջ ի ձեռքն ունենալ: Քրիստոստուր էֆ. այսպէս չըրաւ, բայց ես իմ պարտքս կատարած եղայ զանոնք ժամանակին հրատարակելով:

Նոյն տարուաւ կրեա 730, էջ Ա. Փախարհեան էֆ. ի առ իս. ազգաւ խօսքը չէի հասկըցեր, ինչպէս կրեւի հոն. Փախարհեան էֆ. նոյն օրըն իւր խօսքս չկրկնեց եւ ես այժմ ատենագրութեան մէջ կը տեսնեմ որ ամբաստանութիւն մ'է այն: Բնաւ ին չեմ ընդունիր որ իմ ատենագրութեան միջոցին մագիւ չտի օրինաւորութեան հակառակ բան մ'ըրած լինիմ զիտութեամբ: Եթէ ատենագրութեան մէջ սխալ չէ այն խօսքը կամ եթէ Փախարհեան էֆ. զայն ետ առած չէ այսօր, կը մերժեմ զայն, կը բողոքեմ անոր գէմ եւ կը ճրարիրեմ զՓախարհեան էֆ. որ մինչեւ ներկայ նստին ատենագրութեան վաւերացման ներկայանալի օրն իւր ամբաստանութիւնն հատուակ, իսկ եթէ հաստատուելու չենէ, իւր խօսքն յետ կոչած կը համարիմ:

Նիտոս ԵՐ, կրեա 732 էջ Բ. Պեկեան էֆ. թիւր զեղջուղով 4 գրուած է ք կրտէ, Ձեւ կրնար անտարբեր մնալ կամ ընդունիլ, երբ ժողովով վաւերացեալ ատենագրութեանց ճշդութիւնն ու բանան եւ իրենց խօսքին ոյժն անցեալ պաշտօնէութիւն մը խմբեղու մէջ որոնեն, որոյ անգամ էի եւ ես:

Կը յաւելում ի վերջէ որ եթէ նախորդ ատենագրութեանց վերայ այսօր գրուորագրէս ներկայացեալ գիտողութեանց մէջ իմ կողմէ պատասխանի արժանի ակնարկութիւնք տեսնեմ, անոնց պատասխանը ներկայ նստին վաւերացման օրը պիտի կրնամ տալ:

(Ստորագ.)
Յ. Լ. ՄԵՐԷՆԻՐ - Գ. Բ. Է. Գ.

ՊԵԿԵԱՆ Թ. Է. Բ. — Թէեւ ատենագրութեանց մէջ իմ խօսքերս չառ անդ սխալ արձանագրուած են, սակայն աւելորդ կը համարիմ զգիտողութիւններ ընելով զանոնք ուզելու:

ՂԱԶԱՐԱՍԵԱՆ Ք. Է. Բ. — Իմ խօսքերուս մէջն ալ պակասեր կան նոյնպէս, բայց զանոնք ոչ ի զիր ատենու ժամանակ ունիմ, եւ ոչ ալ հոս զգիտողութիւն ընելու մտադիր եմ, այլ միայն զիւրանին ուշադրութիւնը կը հրաւիրեմ այս մասին:

ՄԵՐԷՆԻՐ-ԳՈՒԼԻ Գ. Է. Բ. — (Նախորդ Ատենագրութիւնը) կը հարցնեմ թէ նախորդ ատենագրութեանց վրայ լուրջ գիտողութիւններն զրով պիտի հազարդութիւն Գիւանին, ինչպէս անցեալ նիստին մէջ որոշուեցաւ, թէ ոչ բերանացի յատենի աստ տեղի պիտի ունենան:

ԱՏԵՆԱԳՐՈՒ Է. Բ. — Անշուշտ գրաւոր սխալի լինին, անցեալ նիստին որոշմանը համեմատ:

ՂԱԶԱՐԱՍԵԱՆ Ք. Է. Բ. — Բայց այդ որոշումը միայն զիտուած ատենագրութեանց կը վերաբերի:

ՄԵՐԷՆԻՐ-ԳՈՒԼԻ Գ. Է. Բ. — Բացառեմ հարցման նպատակը, Գիտողութեան ենթարկուած ատենագրութեանց մէկ մասը իմ ատենագրութեան ժամանակին կը վերաբերի, եւ ես թերեւս եղած գիտողութեանց ի պատասխան բացառութիւններ ունենամ տալու: Բայց եթէ անխափր ներքի ինի թէ բերանացի եւ թէ

գրաւոր գիտողութիւններ ընել անխափր, այն ատեն կարելի չ'լինի որ անհետ միանգամայն պատասխանել:

ՊԵԿԵԱՆ Թ. Է. Բ. — Եթէ այդ խօսքերը մեր ըրած յայտարարութեան կակնարկեն, պէտք է ուրեմն ի միտ աւնուլ թէ մենք ատենագրութեանց վրայ գիտողութիւն չ'ըրինք, այլ պարզապէս գիտողութիւն ընելու շուղելին յայտնեցինք:

Ատենագրութեանց վրայ ուր չ'գիտողութիւն չ'ներկայանար Գիւանին: Հետեւապէս Ատենագրութեան անոնց վաւերացումը ժողովոյ մեծագոյն մասի ներկայութեան վերապահելով օրուան կարգը ձեռք կառնու:

ԱՏԵՆԱԳՐՈՒ Է. Բ. — Օրուան կարգին մէջ թէեւ ատենագրութեանց վաւերացման խնդրէն ետեւ Վեհ. կաթողիկոսի կողմէն կայ նշանակուած բայց բոս օրում անցեալ նիստին մէջ այս խնդիրը յատուկ Յանձնաժողովոյ մը յանձնուեցաւ. ուստի բնականաբար պէտք է զայն ի բաց հանել օրուան կարգէն, եւ այն ատեն անցնել կրկին: Երբ Յանձնաժողովն իւր տեղեկացիրը բեւէ, իսկ հիմա կարգը Յանձնագրութեան վերաբնութեան մասին եղած առաջարկութեանն է, որ անցեալ անգամ ժողովին մէջ առաջնութիւն ստացաւ երկու նախագաս խնդրոց վրայ:

ԹՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. Է. Բ. — Այսօր նախագահ Արքայանը ժողովին ներկայ չ'գնաւիր. եւ եթէ չ'լի պիտի կրնայ գալ, հատկէ ուրեմն Նորին Արքայանութեան տեղ լրամասնակեաց Նախագահ մը անուանել:

ԱՏԵՆԱԳՐՈՒ Է. Բ. — Նախագահ Արքայանը եկած է արդէն, եւ վերջ խորհրդարանը կը գտնուի, սակայն սակաւ ինչ անհանգիստ վնեղութեւն մը ետքը պիտի կրնայ գալ ժողովին նախագահելու. եւ արգէն ատենանը Նորին Արքայանութեան հրահանաւ բացուած է:

2. ԱՌՇԱՐԱՐՈՒԹԻՒՆ 17 ԵՐԵՍՓՈՒՄԵՆԸ
ԱՍՄԱՐԵՐԹՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԳՆՆՈՒ ԻՆԵՆ ՄԱՍՆԱՓՈՂՈՎ ՄԷ ԵՐԱՊԵՆԻ ԵՎ ԵՐԱՊԵՆԻ ԵՎ ԵՐԱՊԵՆԻ:

ՊԵԿԵԱՆ Թ. Է. Բ. — Սահմանագրութեան

վերաբնութիւնը Յանձնաժողովոյ մը յանձնելու մասը՝ ասկէ առաջ տասն եւ եօթն երեսփոխանք առաջարկութիւն մը մատուցին ժողովին, եւ անաւասիկ այսօր կարգն եկաւ այդ խնդիրը յուշելու: Այժմ նոյն երեսփոխանաց կը մնայ իրենց յարուցած խնդիրը պաշտպանել, եւ բացառել թէ ինչ նկատու մեկերով կուզեն Սահմանագրութեան վերաբնութեան գործը Յանձնաժողովոյ մը յանձնել տալ: Եթէ տասներեօթն երեսփոխանաց մին լինելու պատիւն ունենայի, պիտի փոխարին խօսք անելու, բայց այդ պատիւը չ'ունիմ գործարար, ուստի կը խնդրեմ որ առաջարկողը սկսին խօսիլ:

Տ. ՂԱՍԵՆՆԻՐ Վ. ՓԻՐԱՂԱԼԷՄԵԱՆ. — Այդ առաջարկութիւնն ընող տասն եւ եօթն երեսփոխանաց մինն ալ նուստս է, կուզեմ որ Սահմ. վերաբնութիւնը Յանձնաժողովոյ մը յանձնուի, անոր համար որ ասկէ առաջ Ընդհանուր ժողովը վերաբնութիւնն ուղեւով ինք կատարել ուզակի, սկսաւ զայն, բայց Պատրիարքութեան վերաբերեալ յոյուածին համար միայն քանի մը նիստեր զոհեց, եւ անհար եղաւ այնուհետեւ ընելու վերաբնութեան համար հինգ տարի պայմանաժամ որոշուած է, եւ զայն կատարելու պաշտօնով Յանձնաժողով մը արամագրուած, զոր ընդհանուր ժողովը կը կազմէ. Կրօնական եւ Բազմաբնակ ժողովներէն, Տեսուչ Խորհուրդներէն, Ընդհանուր ժողովոյ մէջ զեն կամ զբաւն որոշեալ թուով անդամներ ընտելով, որոց թիւն է քսան: Մեր առաջարկութիւնն է նոյն իսկ Սահմ. Ծրագր յոյուածին համեմատ այս Յանձնաժողովը կազմել, եւ անոր յանձնել վերաբնութիւնը:

Տ. ՄԱՏԹԷՈՍ Վ. ԻԶՄԻՐԼԵԱՆ. — Սա միայն կը յաւելում Ղաւնոց վարդապետի բացառութեանց թէ Սահմ. Ծրագր յոյուածը ճշդիւ գործարարեալ համար՝ պէտք է նախապէս յատենի Ընդհանուր ժողովոյ ի նկատի առնուլ եւ որոշել թէ Սահմանագրութեան որ կէտերն են անգործարարելի եւ փոխոյնութեան կարօտ, ու այնուհետեւ Յանձնաժողովը կարգելով անոր յանձնել վերաբնութիւնն կատարելու եւ հարկաւոր դատուած փոխոյնութիւնները սահմանելու գործը:

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ Մ. Է. Բ. — Առաջարկու-

թիւնը ստորագրող երեսփոխանաց մինն ալ ես եմ, եւ համամիտ գլխօղին Մատթէոս վարդապետի գլխօղու թեան :

ՏՅԼԵՄԱՔ ԷՅ . ԷՆՔՍԷՐՃԵԱՆ . — Նոյն պէս ստորագրողներէն մինն լինելով եւ ես , համակարծիք եմ Մատթէոս վարդապետի :

ՊԷԿԵԱՆ Թ . ԷՅ . — Մատթէոս վարդապետ առաջարկութիւն մը ըրաւ , զոր կրկնողներ եղան : Առաջարկեց նա՛ որ Սահմանադրութեան վերաքննութեան կէտերն յատենի Շնգ՛-ժողովոյ նախ որոշութիւն , եւ այնուհետեւ Սահմանադրութեան Գճրդ յօդուածին համեմատ Յանձնաժողով մը կազմուի վերաքննութեան գործը կատարելու պաշտօնով : Բայց եթէ այսպէս փոփոխելի կէտերն Շնգ՛անուր ժողովը որոշէ , որիչ բան չ'պիտի լինի ուրեմն այդ Յանձնաժողովոյ պաշտօնը , եթէ ոչ կարգաւորել եւ խմբագրել Շնգ՛ . ժողովոյ կողմէն եղած փոփոխութիւններն , որ մեծ բան մը չէ , եւ խիստ կը թեթեւեայ Յանձնաժողովոյ պաշտօնը : Սակայն լնշ՛ակառակն՝ այդ վերաքննութեան կարօտ կէտերն որոշել՝ նոյն իսկ Յանձնաժողովոյ պաշտօնն է , եւ չէ թէ Շնգ՛ . ժողովին գործը , եւ անոր համար է որ Սահմանադրութիւնը կը տրամադրէ վերաքննիչ Յանձնաժողովը կազմել Ազգ . Վարչութեան մէջ պաշտօն վարող անձերէ , որպէս զի փորձառութեամբ գիտնան օրինաց թերին , եւ կարող լինին հարկաւոր փոփոխութիւններն սահմանել : Հիմա Շնգ՛անուր ժողովոյ բան մը կը մնայ ընել , եւ այն է որոշել թէ անմիջապէս պէտք է վերաքննութեան Յանձնաժողովը կազմել , թէ ոչ սպասել քիչ մը որ նորընտիր Վարչութիւնը փորձառութիւն ստանայ , եւ այնուհետեւ կազմել զայն : Իմ կարծիքս եթէ կուզէք իմանալ , ես կըսեմ թէ՛ լաւագոյն է սպասել տարի մը եւս որ Ազգ . Վարչութիւնը փորձառութիւն ունենայ , եւ այնուհետեւ կազմուի Յանձնաժողովը , որպէս զի գլխաւորութեամբ իւր քըն՛նութիւնը կատարէ , եւ հասուն արդիւնք մ'արտագրէ :

Տ . ՄԱՏԹԷՈՍ Վ . ԻԶՄԻՐԼԵԱՆ . — ՊԷԿԵԱՆ էՔ . իմ առաջարկութեանս դէմ գիտողութիւն ըրաւ ըսելով թէ՛ Սահմանադրութեան փոփոխելի կէտերն որոշել Յանձնաժողովոյ

պաշտօնին կը վերաբերի , եւ չէ թէ Շնգ՛անուր ժողովին , հետեւապէս Ազգ . Վարչութիւնն իր փորձառութենէ զուրկ նկատեց եւ գիտողութեանց տեսրի մը չ'զոյտ թիւնը յատկապէս լինելով առաջարկեց տակաւին տարի մ'ալ սպասել , որ Վարչութիւնն փորձառութիւն ստանայ :

Այս կէտերը պարզելու համար կը գիմեմ Սահ . Գճրդ յօդուածին եւ կը կողման զայն .

« Ազգ . Սահմանադրութեան հիմնական սկզբունքը անփոփոխելի են : Բայց զրը « փորձառութեամբ ինչ ինչ տրամադրութեանց « փոփոխութիւնը հարկաւոր դատուի , Շնգ՛անուր ժողովը՝ Սահմանադրութեան հաստատութենէն հինգ տարի ետքը՝ վերաքննութեան Յանձնաժողով մը կը կազմէ , Վո՛ճանահան եւ Քաղաքական ժողովներէն երկրպիկան « անդամ , չորս Տեսուչ Խորհուրդներէն երկրպիկան անդամ , եւ անոնցմէ դատ Շնգ՛անուր ժողովոյ մէջէն կամ դրոշն վեց հոգի . « քնդ ամենք քսան անդամ ընտրելով : Այս « Յանձնաժողովը կը սահմանէ հարկաւոր դատուած փոփոխութիւնները , որ Շնգ՛անուր « ժողովը վաւերացնելէն ետքը , Բարձրագոյն « Դրան կը ներկայացուին , եւ Վարչութեան « հրամանին համեմատ կը գործադրուին : »

Այս յօդուածը ինքնին կը հաստատէ թէ Սահմանադրութեան փոփոխելի կէտերը որոշելու գործն Շնգ՛անուր ժողովինն է , վասն զի նա է որ Սահմանադրութեան վերաքննութիւնը որոշելու համար անոր այս ինչ կամ այն ինչ տրամադրութիւնը փոփոխութեան կարօտ կըրնայ դառնալ , եւ Յանձնաժողովոյ պաշտօնը կը լինի միայն այդ փոփոխութիւնները սահմանել :

Բայց ՊԷԿԵԱՆ էՔ . երբ մէկ կողմէ Յանձնաժողովոյ կը վերագրէ այս գործը եւ փորձառութեան սպասել հարկ կը տեսնէ , միւս կողմէ գլխաւորութեանց տուձար կը վնասէ փոփոխելի կէտերուն վրայ լոյս առնելու համար , որով հակասութեան մէջ կընկնի : Առաջարկութիւնս կրկնելով կըսեմ որ փոփոխելի կէտերը որոշուին հաս :

ՊԷԿԵԱՆ Թ . ԷՅ . Բայց ինչպէ՛ս կարելի է որոշել , թերեւս հարիւր նիստ տեսէ :

ԱՂԱՔԷԿԵԱՆ Ս . ԷՅ . — Արդէն Շնգ՛անուր ժողովը մեր Ազգային Սահմանադրութիւնը

նը վերաքննութեան կարօտ դատած եւ ոչ միայն ինչ ինչ կէտեր՝ զորս չեմ յիշեր մի առ մի , սրբադրած է , այլ եւ Յանձնաժողով մը դրած է երբեմն , Սահմանադրութիւնը վերաքննելու պաշտօնով : Արդարեւ նոյն Յանձնաժողովը Սահմանադրութեան տրամադրութեան համեմատ չ'էր կազմուած ճշդիւ , սակայն իւր պաշտօնին բնութեան պահանջած հանդամանքներն չէին պակսեր , եւ Յանձնաժողովն որու անդամներէն մինն էր նուաստս ալ , աշխատելով Սահմանադրութիւնը վերաքննեց . եւ ծրագիր մը ըրաւ Շնգ՛անուր ժողովին : Մրազընն մէջ օրէնսդրական այնպիսի կէտեր կային , զորս միայն Շնգ՛անուր ժողովն իւր ձեռնհասութեամբ կարող էր լուծել որոշել , հետեւապէս ժողովը ծրագրին քննութեան ձեռնարկեց : Ամանք բառերու , ոմանք պարբերութեանց վրայ սկան քննութիւններ ընել , եւ այն առնել էթէ չեմ սխալի , մեր պաշտօնակիցներէն Օդաէն էՔ . ին սռաջարկեց որ միայն ծրագրին սկզբունքը քննուի , եւ ըլլալէք փոփոխութեանց խմբագրութիւնը Յանձնաժողովոյ մը յանձնուի : Սակայն ի վերջէ տեսնուելով որ այս նոր ծրագիրը Սահմանադրութենէն տարբեր կերպով պատրաստուած էր , եւ Ազգային Վարչութեան ու իւր ձիւղերուն կազմութեան մէջ փոփոխութիւններ մուտ դտած էին , ժողովը լաւագոյն համարեց ըուն Սահմանադրութեան մէջ տեղ դնել , յօդուած առ յօդուած քննել զայն եւ փոփոխութեան կարօտ կէտերը սրբադրել առժամայն : Այս եղանակն ալ չ'յաջողեցաւ , եւ ինչպէս քիչ մ'առաջ Արժանապատիւ Վարդապետն ըսաւ , քանի մը նիստեր զոնուելէ հետեւ Սահմանադրութեան առաջին գլխէն եւ ոչ իսկ երեք յօդուած կրցաւ սրբադրուիլ , եւ ստուգիւ եւ ոչ մէկ երկրի , եւ ոչ մէկ ազգի մէջ տեսնուած է որ այսքան բազմաթիւ անդամներէ կազմեալ ժողով մը ուղղակի ինք իւր ամբողջութեամբ օրինագիրք մը յօրինէ , կամ վերաքննէ , եւ այս տեսակ ձեռնարկ մը չըսեմ անհնար գէթ խիստ դժար է :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ . — (Շնգ՛միջելով) Զէ թէ դժար , այլ անհնար է իրօք :

ԱՂԱՔԷԿԵԱՆ Ս . ԷՅ . — (Խօսից թերեւ ձեռք առնելով) Ինչ օր է , ի սկզբան երեսփո-

խանաց՝ կարծիքը տարբեր էր այս մասին , եւ այնպէս կը թուէր թէ վերաքննութեան համար մտածուած վերջին եղանակը գործնական էր , ուստի չ'յամառեցանք եւ պատուելով ժողովին որոշումը այդ եղանակին հետեւեցանք . բայց փորձն ամէն բան յայտնեց :

Այժմ կը ներկայանայ ժողովին տամուկու եօթն երեսփոխանաց առաջարկութիւնը վերաքննութիւնը Յանձնաժողովոյ մը յանձնելու համար : Ես զայդ առաջարկութիւնը ստորագրած չ'եմ , բայց համամիտ եմ անոր եւ կը ցանկամ որ Յանձնաժողովը կազմուի , եւ Սահմանադրութեան վերաքննութիւնն անոր միջոցաւ կատարուի , որպէս չի Շնգ՛անուր ժողովն՝ որու համար ասկէ մեծ գործ չ'կայ , կարող լինի ըսել վճռաբար . անաւասիկ մեր ազգային օրէնքը : Երբ ժողովոյ ատենադրութիւններն անագան ի լոյս կելնեն եւ կը դիզուին մեր դիւանը զեռ սղադրութեան եղանակ մը չունենալուն պատճառաւ , որքան զգալի կը լինի անոնց կարեւորութիւնը , եւ ինչպէս կը պահանջուի որ ամէն նիստի ատենադրութիւն յաջորդին՝ եւ օր մ'ալ առաջ ներկայ անվրէպ , այնպէս որ , ինչպէս քիչ մ'առաջ տեսնուեցաւ , երեսփոխաններէն ոմանք գլխաւորութեան ներք գրով մատուցեր էին եւ ոմանք ալ թէեւ գլխաւորութիւն ունէին , բայց լռեցին , ժամանակին կորուստ չընելու համար : Արդ ատենագրութեանց ժամանակին հասնիլը որքան հարկաւոր է , անկէ հազար անգամ աւելի հարկաւոր է Սահմանադրութեան վերաքննութիւնը փութացնելը :

Աւելորդ է նաեւ եւ ժամանակի կորստեան պատճառ՝ Շնգ՛անուր ժողովոյ մէջ Սահմանադրութեան վերաքննելի կէտերն որոշել , եւ այս գործը նոյն իսկ Յանձնաժողովոյ անկ է : Արդէն Սահմանադրութեան էական սկզբունքներն որոց ոգին է ընդհանուր քուէարկութեան եւ անկէ հետեւող պատասխանատուութեան սկզբունքը , անփոփոխ հրատարակուած են , եւ անխախտ կը պահուին , իսկ միւս օրինական տրամադրութիւններն երկրորդական են այս սկզբանց ըով , եւ երբ Շնգ՛անուր ժողովն ուզէ անոնց մէջ մտնել , փոփոխութեան կարօտ կէտերն որոշել , չէ թէ միայն նանիւր աշխատանք մը պիտի կրէ , այլ եւ վերաքննութեան վերջ մէջ մտած պիտի լինի :

իսկ գալով Պէկեան էֆ. ի առաջարկութեան որ է վերաքննութեան Յանձնաժողովը կազմելու համար տարի մը սպասել, որ Աւարչութիւնը փորձառութիւն ստանայ, այն, կը հաւանիմ թէ փորձառութիւնը վերաքննութեան յարակից պայմանն է անհրաժեշտ, սակայն հարկ չ'եմ տեսներ սպասելու, վասն զի տաս տարի է ի վեր Սահմանադրութիւնը կը փորձուի, եւ ազգային խորհուրդը զիտեն թէ որոնք են անոր անգործադրելի արամադրութիւններն, այս տասնամեայ փորձը բաւական է, եւ նոր նոր փորձերու ժամանակ ու կարօտութիւն չկայ:

Ամբիոնեմ խօսքս: Սահմ. յատենի Ընդհանուր Ժողովոյ վերաքննել անկարելի է, ուստի ինչպէս Սահմ. Գրք յօդուածը կը տրամադրէ, պէտք է Յանձնաժողով մը կարգել եւ անոր յանձնել այս գործը, առանց սակայն փոփոխելի կէտերը կանխաւ Ընդհանուր Ժողովոյ մէջ որոշելու, որ անտեղի է: Սակայն այս Յանձնաժողովոյ անդամոց թիւը քսանէն եօթնի զեղչուուելու է, տեղական հեռա որութեանց պատճառաւ: այսքան բազմաթիւ անդամներ թունցող Ժողովի մը համար զիւրին չ'է շուտով գումարուիլ, եւ արդէն նախորդ վերաքննութեան Յանձնաժողովն ալ թէեւ եօթն անդամ է կը բաղկանար, բայց մենք զիտեմք միայն թէ ինչ նեղութիւններ կը կրէինք գումարուելու համար: Այսպէս Յանձնաժողովոյ միջոցաւ կատարեմք վերաքննութիւնը, եւ ներկայացնելով զայն կայսերական հաւանութեան սկիւմք գործադրութեան: թէեւ այս բարձրագոյն վաւերացումն ալ հարկաւոր չէ այնքան, քանի որ Սահմանադրութեան հիմնական սկզբունքներն որք կայսերական հաւանութեան զրօշմն ունին արդէն, անփոփոխ պիտի մնան, եւ միւս յօդուածներն անոնց հետեւութիւններն են, եւ ոչ այլ ինչ: Եթէ այս գործնական միջոցը չ'ընարեմք, թերեւս տասն եւ հինգ օր ետքն ալ քանի մը երեսփոխանք ելնեն առաջարկութիւն մը բերեն այն մտօք թէ՛ Սահմ. վերաքննել հարկաւոր չ'է, եւ այսպէս օր քստ օրէ խնդիրը կնճռտի: Արոշեմք ուրեմն զայն, եւ զբաղիմք ատենական կանոնադրին, որ ժողովոյ ներքին բարեկարգութեանը համար ամենէն աւելի հարկաւոր է:

Կը կ'ըսեմ խօսքս խնդրելով Յիւստէն որ

մինչեւ ատենադրութիւնը չ'արտրաստուի, Ժողովը գումարման հրաւեր չ'ընդունի:

ՓՊՓԱԶԵԱՆ Ս. Է.Յ. — Նախ ինչ զխողութիւն որ Ազարէկեան էֆ. ըրաւ ի վերջէ ատենական կանոնադրութեան մասին, կընդունիմ եւ կը ճայնակցիմ իրեն: Ա. յո, Ընդհանուր Ժողովոյ համար եթէ ստիպողական եւ անհրաժեշտ բան մը կայ, այն ալ ատենական կանոնադրին է, որու չզոյութենէն քանի քանի անգամ ժողովն յուղուեր, ազմկեր է, եւ գանդատներ ծագեր են:

Այս զիտողութիւնն ընելէ ետեւ կը դատամ վերաքննութեան խնդրոյն: Երբ այս վերաքննութիւնը Յանձնաժողովոյ մը յանձնելու առաջարկութիւնը ներկայացնողները Սահմանադրութեան Գրք յօդուածին կը կ'ըմբն իրենց առաջարկութիւնը պաշտպանելու համար, նշանաւոր կը համարիմ այս նիստը: Ա. յո լքեալ յօդուածը իմաստութեամբ զրուած է հոն, որ մինչեւ ցարդ յերեւան չ'բերուելուն վերաքննութեան խնդրոյն մէջ Ժողովն այսքան ժամաւաճառ եղաւ: Նոյն յօդուածը կըսէ. « Երբ փորձառութեամբ (Սահմանադրութեան) ինչ ինչ տրամադրութեանց փոփոխութիւնը հարկաւոր դատուի, Ընդհանուր Ժողովը Սահմանադրութեան հաստատութենէն հինգ տարի ետքը վերաքննութեան Յանձնաժողով կը կազմէ: »

Ահաւասիկ վերաքննութեան էական պայմանը հոս ամփոփուած է, հնգամեայ պայմանաժամ մը որոշել է, որպէս զի փորձը օրինաց թերի ու անգործադրելի կէտէն երեւան հանէ, եւ գիտակցութեամբ հարկաւոր դատուած փոփոխութիւնները կատարուին: Բայց միթէ այսպէս եղաւ, չեմ ուզեր անցելոյն յիշատակաց մէջ մտնել, վասն զի այդ յիշատակներն արամալի են, եւ խորին սպաւորութիւն մը կը ներդրեն մեր վրայ, այլ ցաւօք ուղղելով Ազարէկեան էֆ. ի մէկ սխալը՝ սա կրթեմ միայն որ երբէք Սահմ. թերութիւններն երեւան չ'բերուեցան, երբէք փորձառութեան արդեանց չ'սպասուեցաւ, այլ այն անձերն որք իրենց առջեւ անձնական արդեղներ ունէին գործելու, Սահմ. նկատեցին իբր այն խօսքնդ արտերուն պատճառ, եւ անժամանակ վերաքննութեան կնխարկեցին զայն, բայց չէ

թէ Ընդհանուր Ժողովոյ մէջ, այլ Ժողովէն դուրս. եւ այսպէս Յանձնաժողով մը զրուեցաւ Սահմ. վերաքննելու պաշտօնով: Յանձնաժողովն իւր ծրագիրը բերաւ, բայց Ընդհանուր Ժողովը յորմէ բղեալ չ'էր ոչ վերաքննութեան որոշումը, եւ ոչ Յանձնաժողովն ընտրութիւնը, մէկի գրաւ անոր ծրագիրը, եւ ինքուրիչ Յանձնաժողով մը կարգելը, եւ ծրագիր մը յանձնարարեց անոր: Բայց ինչպէս պատճառաւ ըսի, վերաքննութեան ամենէն էական պայմանը կը պահուէր, փորձառութեան արդեւ չ'կար, որ Յանձնաժողովոյ խորհուրդները լուսաւորէր, եւ առաջնորդէր զինքը, ուստի Յանձնաժողովը փոխանակ Սահմանադրութիւնը վերաքննելու, նոր Սահմանադրութիւն մը չ'ինեց, եւ Ընդհանուր Ժողովը զայն ալ մերժեց: Այս մերժման ատեն երեսփոխանք նկատելով որ նոյն իսկ Ընդհ. Ժողովն կարգեալ Յանձնաժողովն ալ, աւելի նոր ի նորոյ քան փորձառութեամբ վերաքննութեամբ ծրագիր մը բերել էր, ոչ եւս Յանձնաժողով ուղեցին կարգել, այլ ըսին. ահաւասիկ Սահմանադրութիւնը, եւ ահաւասիկ նոր ծրագիրը, զանոնք զէմ առ զէմ բաղդատելով յատենի Ընդհ. Ժողովոյ կը կատարելք վերաքննութիւնը Սահմանադրութեան վրայ: Այս տեսակ պարագաներու մէջ Ընդհ. Ժողովը չը կրցաւ Գրք յօդուածին զիմել, եւ յարգելու համար իւր Յանձնաժողովոյ ընտրութիւնը, սկսաւ վերաքննութիւնը ինքն ուղղակի կատարելի հարկին ինչ ինչ մասերը Յանձնաժողովոյ յանձնելու տրամադրութեամբ: Դժբաղդաբար Սահմ. առաջին գլխին մէջ Պատրիարքի պաշտօնին, ընտրելիներու հպատակութեան վրայ այնպիսի կնճռոտ խնդիրներ ծագեցան, զորս Ժողովը սրբոզելու համար պարտաւորեցաւ երկու նիստ զոնել եւ հոն կանգ առնուլ: Ով որ կըսէ թէ Սահմանադրութիւնը հոս վերաքննել անկարելի է, կը սխալի, վասն զի դեռ միայն երկու նիստի մէջ վերաքննութեամբ զբաղեցանք. եւ այնպիսի կէտերու վրայ, որոց առջեւ նոյն իսկ վերաքննութեան Յանձնաժողովն ալ երբ կազմուի՝ կանգ պիտի առնու, ինչպէս նաեւ կ'ըմբնէ Ընդհ. Ժողովն ալ երբ Յանձնաժողովն իւր տեղեկագիրը բերէ: Ուստի աւելի լաւագոյն է անոնց խորը բնաւ չ'մտնել, եթէ Ընդհ. Ժողովն այսպէս ընէր, եւ այդ

խնդիրներու մէջ ուր կ'աթուղիկուի փոխադրութեան խնդիրն ալ կայ, չ'խորատեղելով Սահմ. ուրիշ գլխներուն, Ընդհ. Ժողովոյ կազմութեան գլխին եւ այլն, անցնէր, անշուշտ կը դիւրանար գործը: Այս պարագաները պէտք չ'է որ անյիշատակ մնան, որպէս զի ժողովուրդը բմբանէ Ընդհանուր Ժողովոյ ընթացից շարժառիթը, եւ գործոց վիճակը: Իսկ հիմա եթէ Ժողովը Սահմանադրութեան Գրք յօդուածին տրամադրութիւնը ուժով բռնէ, կը համարձակիմ ըսել թէ վերաքննութեան մասին Զրք նիստի մէջ իւր տուած նախորդ որոշումն ալ յարգած կը լինի: Եւ ի՞նչ էր այդ որոշումն: յատենի Ժողովոյ սկիւմբ վերաքննութիւնը, եւ այն մասերն որոնք խնդրոց նիւթ կը դառնան եւ փոփոխութիւն կենթադրեն, Յանձնաժողովոյ մը քննութեան յանձնել եւ տեղեկագիր ուղել: Քաղաքական ժողովոյ ընտրութեան խնդրոյն մէջն ալ Ընդհ. Ժողովը միեւնոյն կերպով վարուեցաւ, երկու ներհակ կողմերէն Յանձնաժողով մը գրաւ, որ իսկոյն ընտրութեան յօդուածը վերաքննեց, եւ ութ աւուր մէջ արչիւնքք բերաւ Ժողովին. որով խնդիրը լուծուեցաւ: Ընդհանուր Ժողովոյ Զրք նիստէն անդին ամբողջ 30 նիստի մէջ Սահմանադրութեան վերաքննութեան կարգը չ'եկաւ, եթէ զէթ եօթ կամ ութ նիստի մէջ զբաղէինք վերաքննութեան, եւ զըտուարին կէտերու մէջ վիճարանող կողմերէ կարգեալ Յանձնաժողով մը կազմէինք, այն ատեն յայտնի պիտի լինէր թէ վերաքննութիւնը յատենի աստ կատարել հնարին է թէ ոչ:

Սահմանադրութեան Գրք յօդուածը լաւ կը տրամադրէ, եւ փորձառութեան հարկը երեւան կը դնէ. նոյն յօդուածին տրամադրութեամբ Յանձնաժողովն կազմելու համար Պէկեան էֆէնտի կառավարիչ սպասել Ազգային Աւարչութեան փորձառութեանը, իսկ Սատթէոս վարդապետ փորձառութիւն կայ կըսէ: Բայց զիտե՛ք թէ ուր է այդ փորձառութիւնը, միայն Պօլսի շրջանակին մէջն է, վասն զի դաւառաց մէջ Սահմանադրութեան գործադրութիւնը դեռ նոր սկսաւ, եւ իբր անգամ Ազգ. Աւարչութեան կը յայտարարեմ թէ զաւառներ կան, ուր բնաւ Սահմանադրութիւնը գործադրուած չէ, եւ գործադրել սկսող դաւառներէն ալ նոր

ի նորոյ դիտողութիւններ սկսան զայ : Թէ դաւաններուն եւ թէ Պօլսոյ փորձառութեանց արդիւնքը պէտք է նաեւ : ներկայացնող Ժողովին եւ ապա վերաքննութեան պէտքն որոշուի : մինչդեռ Սահմանադրութիւնը անժամանակ վերաքննութեան ենթարկուածատեն Ժողովը միայն մեծագոյն մասի խնդրոյն վրայ փորձառութիւն ունէր : Արդ՝ Ընդհանուր Ժողովոյ Զոր նիստին մէջ տրուած որոշումը համաձայնեցնելով Սահմանադրութեան 99րդ յօդուածին կրեւմ թէ պէտք է ամէն երեսփոխանք որ Սահմանադրութիւնը սերտածնն եւ փորձառութեամբ դիտողութիւններ ունին , յատուկ նիստի մը մէջ գրով ներկայացնեն Ընդհանուր Ժողովոյ եւ Ժողովին անոնց կարեւորութիւնը որոշելէ ետեւ՝ սկսի վերաքննութիւնը, որովհետեւ Յանձնաժողովը ընտանաբար կազմուած կը լինի դիտողութիւն ներկայացնող այն անձերէն, որոց փորձառութեան արդիւնքը արժէք գտած է Ժողովոյն առջեւ : Ամբողջութեամբ իսուքս ըսելով թէ Սահմանադրութեան թերութեանց վրայ ըլլալիք դիտողութիւնները քանի որ միայն փորձառութեան արդիւնք կրնան լինիլ , պէտք է որ երեսփոխանք իրենց դիտողութիւններն ներկայացնեն կանխաւ եւ այն ատեն կորոշուի թէ վերաքննութեան պէտք կայ , եւ թէ ո՞ր կէտերն են վերաքննութեան կարօտ :

Այս միջոցիս Ամեն. Սրբազան Պատրիարքը կուգայ եւ Ժողովոյ կը նախագահէ :

ՊԵՆՆԱՆ Թ. ԷՅ. — Ինչ էր Փափազեան էֆ. ի առաջարկութիւնը , չ'կրցի հասկնալ :

ԱՏՆԱՊԵՏ ԷՅ. — Այդ իմ պարտականութիւնս էր հարցնել , բայց Փափազեան էֆ. անաւասիկ իւր առաջարկութիւնը ի գիր առնելու կը բազի :

Փափազեան էֆ. գրով իւր առաջարկութիւնը կը ներկայացնէ , որ անաւասիկ :

« Սահմանադրութեան որ կէտերը որ վերաքննութեան արժանի են , պէտք է որ իւրաքանչիւր երեսփոխան իւր փորձառութեան արդիւնքը ներկայացնէ Ժողովին , եւ ապա վերաքննութեան սկսիլ :

ՊԵՆՆԱՆ Թ. ԷՅ. — Երբ պահ մ'առաջ վերաքննութեան Յանձնաժողովոյ պաշտօնին վրայ խօսելով դիտողութեանց առումարին չ'զոյութիւնը ակնարկեցի : Մտածեալ վարդապետ հակառակութիւն մը կարծեց նշմարել այս խօսքիս մէջ , եւ ինչ հարկ , բաւ , Յանձնաժողով կարգելու , եթէ Ընդհանուր Ժողովը դիտողութեանց տեսքին պիտի դիմէ Սահմանադրութեան փոփոխելի արամադրութիւններն որոշելու համար եւ սակայն Մտածեալ վարդապետը սխալ ըմբռնեց խնդիրը :

Սահմ. մէջ Հարկուոր դատուած փոփոխութիւնները չէ թէ դիտողութեանց առումարը , այլ Յանձնաժողովը ձեռննտս է սահմանել , ինչպէս 99րդ յօդուածը կը տրամադրէ , եւ այդ առումարը զայն միայն լուսաւորելու կը ծառայէ , այնպէս որ Յանձնաժողովը հարկադրեալ չէ երբէք եղած դիտողութիւններն անհրաժեշտաբար ընդունելու , այլ ազատ է ընդունիլ կամ մերժել , ինչպէս յարմար թուի իրեն , եւ այնպէս բերել իւր տեղեկագիրը Ընդհանուր Ժողովոյ , ուրեմն Յանձնաժողովոյ պաշտօնը դիտողութեանց տեսքին հետ չ'փոխանակուիր , եւ հարկաւոր է : Այս է Մտածեալ վարդապետի դիտողութեան իմ պատասխանս : Իսկ զայով Ազարէկեան էֆ. ի , ընդունեց նա Յանձնաժողովոյ կազմութիւնը եւ անոր պաշտօնին համար փորձառութեան հարկաւորութիւնը , բայց արդէն եղած փորձը հերիք համարելով հարկ չ'դտաւ քիչ մ'ալ սպասելու , եւ առաջարկեց որ Յանձնաժողովոյ անդամոց քսան թիւը զեղչուի : Կրնայ այս թիւը զեղչուիլ հօթի կամ տասնի , ինչպէս որ ատեն ատեն Ընդհանուր Ժողովը Սահմանադրութեան ինչ ինչ կէտերը վերաքննած եւ նոյն իսկ Քաղաքական Ժողովոյ անդամոց թիւն ալ զեղչած է : Այս մասին կրնամք համաձայնիլ Ազարէկեան էֆ. ի հետ , միայն թէ Յանձնաժողովը կազմելու համար իմ կարծիքս այն է թէ պէտք է Սրբային Աարչութեան պաշտօնատարութեան շրջանին լրամանը կամ դէթ տարի մ'ալ սպասել , որպէս զի փորձն երեսան հանէ թէ վարչական գործոց մէջ Սահմանադրութեան որ կէտերն են փոփոխութեան կարօտ , վասն զի ինչպէս նոյն իսկ Փափազեան էֆ. ալ յայտարարեց , զաւագներու մէջ Սահմանադր-

րութիւնը զեռ նոր սկսեր է գործադրուիլ , եւ կարեւոր դիտողութիւններ ուղղուիլ , որոնք անշուշտ մեծ լրաց պիտի մասակարարեն Յանձնաժողովին : Չեմ ուզեր ըսել թէ այս վերաքննութեան խնդիրը բոլորովին վերջնակէ թողուց սեղանին վրայէն , այլ մնայ նոյն , եւ երբ հարկը պահանջէ անոր այս կամ այն յօդուածը վերաքննել եւ փոփոխել , ընեմք զայս , եւ տարի մը վերջը կազմենք Յանձնաժողովը 99րդ յօդուածին տրամադրութեան համեմատ : Իսկ եթէ Ժողովն ուզէ այժմէն այս Յանձնաժողովը կազմել , ես չ'եմ սխտիկ իմ կարծեացս վրայ , եւ կրնամ համաձայնիլ Ազարէկեան էֆ. ի առաջարկութեան :

ԻՅԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՅ. — Մթին կէտ մը կայ , որ տակաւին չ'պարզեցաւ : Ըսին մեզ եւ դեռ կրտն թէ՛ Սահմանադրութիւնը յատենի Ընդհանուր Ժողովոյ վերաքննել անկարելի է , եւ այս խօսքին գործնական Եղանակութիւնը չ'եմ հասկնար , թող բացատրեն զայն : Եթէ իրօք անհնար է հոս վերաքննել , ուրեմն անհնար է նաեւ Յանձնաժողովոյ բերելիք տեղեկագիրն վրայ վիճարանիլ , եւ քննութիւն ընել , կը հետեւի ուրեմն որ Յանձնաժողովոյ լիազօր արտօնութիւն պէտք է աւլ , եւ ամէն փոփոխութիւն ընդունիլ : Կրնամ արդեօք այս կէտը վիճարանութեան տակ ձգել , կրնամ ըսել թէ Ընդհանուր Ժողովը Յանձնաժողովին կողմէ եղած օրէնսդրական ամէն փոփոխութիւն մերեւաբար եւ առանց քննութեան ընդունելու պարտաւոր է , չեն կարող ըսել զայս : Ժամանակաւ երբ Ընդհանուր Ժողովոյ մէջ վերաքննութեան Յանձնաժողով մը կը կազմուէր , այն ատեն ալ խնդիր յուզուեցաւ այս կէտին վրայ , որպէս թէ Ընդհանուր Ժողովոյ վերաքննութեան իրաւունքը վաւերացման միջոցաւ միայն պահ պանուէր , եւ Սէրվիլէն էֆ. ին՝ որ տեղեկարար էր , ուղեց որ Ընդհանուր Ժողովոյ կողմէ կազմելի Յանձնաժողովը լիազօր արտօնութիւն ունենայ , եւ վերաքննեալ Սահմանադրութիւնն ուղղակի՝ առանց Ընդհանուր Ժողովոյ վաւերացման Բ. Գրան ներկայացնէ , սակայն Ժողովը Սէրվիլէն էֆ. ի առաջարկութիւնն անոր մէկ քուէին դէմ մերժեց եւ վերաքննեալ Սահմանադրութիւնը Ընդհանուր Ժողովին ներկայացնել որոշեց : Այս վերաքննու-

թեան խնդրոյն մէջ ինչ զազանիքներ , ընել չ'եմ ուզեր ներդուր թիւններ , այլ տակաւին չը բացատրուած պարագաներ կային : Իսկ արդ կրտն թէ՛ Սահմանադրութեան 99րդ յօդուածը շատ իմաստութեամբ վերաքննութեան խնդիրը լուծած է , եւ կը յարեն թէ Ընդհանուր Ժողովը պիտի որոշէ վերաքննելի կէտերը : Այս հետեւութիւնը սխալ է : Նոյն յօդուածին տրամադրութեան համեմատ երբ վերաքննութեան համար որոշուած հնգամեայ պայմանաժամը լրանայ , Ազգային Աարչութեան կրտնական եւ Քաղաքական Ժողովները պէտք է որ տեղեկագրեն Ընդհանուր Ժողովոյ թէ անոր որ կէտերը փոփոխութեան կարօտ գտեր են , եւ թէ ինչ պատճառներով : Այն ատեն Ընդհանուր Ժողովը կը քննէ ատենաց առաջարկութիւնը , եթէ անընդունելի գտէ , կը մերժէ , իսկ եթէ կարեւոր գտնէ , քուէ կուտայ վերաքննութեան , եւ իսկոյն Յանձնաժողովը կը կարգէ վերաքննութիւնը կատարելու եւ հարկաւոր դատուած փոփոխութիւնները սահմանելու համար , որ իւր պաշտօնը կատարելով արդիւնքը կը ներկայացնէ Ընդհանուր Ժողովոյ քննութեանն ու ընդունելութեանը , եւ անկէ՝ Բ. Գրան կը ներկայանայ ի վաւերացումն : Եթէ այս ընթացքով երթամք , ճիշտ այնպէս չարժած կը լինի մը ինչպէս կը տրամադրէ Սահմանադրութիւնը : Մենք հիմա պատճառ ունիմք վերաքննութիւնը ընդունելու , վասն զի Ազգային Աարչութեան Սրբազան Նախագահը յայտնած է արդէն թէ չըջանակը նեղ կուգայ , եւ անոր ընդլայնումը խնդրած : Սրբազան Պատրիարք Հօր առաջարկութիւնը խիստ սահմանադրական էր , սա թերութեամբ որ նեղ օղակը չէր ցոյց տար : Ուստի պէտք է Ազգային Աարչութիւնը Սահմանադրութեան անգործադրելի կէտերը ներկայացնէ Ընդհանուր Ժողովոյ , եւ այնուհետեւ Յանձնաժողովը կարգելով վերաքննութիւնը կատարէ . եւ վաւերացնելով գործադրութեան դէմ : Վերջապէս չըջանակը նեղ է կրտն մեզ , պատասխանեմք իրենց . ցոյց տուէ՛ք չըջանակին նեղ կողմերը որ ընդարձակեմք զայն :

Այս է իմ առաջարկութիւնս :

Տ. ՄԱՏԹԷՈՍ Վ. ԻԶՄԻՐԼԵԱՆ — Իմ խօսքերս Պէկեան եւ Օգսէն էֆ. ներու կողմէ սխալ

մեկնուեցան, եւ ըստ թէ Վահմանադրութեան որ կէտերն որ փոփոխութեան կը կարօտին, կանխաւ Ընդհանուր ժողովոյ մէջ պէտք է որոշուին, թո՛ղ Ազգային Արչուութիւնն ալ իւր փորձառութեան արդիւնքը ներկայացնէ, թո՛ղ ՅՅ ի Աարչութեան անդամներն ալ իրենց դիտողութիւնները բերեն, որոց օրով ծագած է վերաքննութեան խնդիրը: Այսպէս Յանձնաժողովն ալ լոյս առնելով իւր պաշտօնին վրայ, դիտակցութեամբ կը գործէ եւ իւր անդեկագիրը կը բերէ:

ԻԻԹԻՒՃԵԱՆ Կ. ԷՖ. — Վահմանադրութեան վերաքննութիւնը կատարելու համար փախազեան է ֆ. ին փորձառութեան կարօտութիւն ցոյց տուաւ, բայց չ'ըացատրեց թէ այդ փորձառութիւնն ստանալու համար տակաւին ազգը որքան ատեն սարսեղու պէտք ունի: Վահմանադրութիւնը 1863 թուականէն ի վեր հաստատուած եւ գործադրութեան գրուած է, բայց այսքան տարուան միջոցի մէջ փորձառութիւն չ'եմք ունեցեր, եւ այսուհետեւ պիտի ստանամք եզեր: Այս խօսքը ուղիղ բանավարութեան հակառակ է: 1864 էն սկսեր են Վահմանադրութեան գործադրութեան արգելքներն երեւիլ, եւ դիտողութիւններ տեղի ունենալով Ընդհանուր ժողովոյ մէջ վիճարանութիւններ լինել, որոց եւ ալ ներկայ դաժուած եմ: Այս ամէնը փորձառութեան բաւական մեծ դասեր կաւանդեն, եւ հարկ չ'կայ սպասել որ նոր նոր դասեր ալ արդի Աարչութիւնը բերէ: Եթէ չեմ սխալիր Ազգային Աարչութեան անդամոց շատը երեսփոխան են, եւ իրր այն Վահմանադրութեան վերաքննութեան նկատմամբ եղած վիճարանութեանց մասնակցած եւ անդեկութիւն ստացած են, բաց ապէ՛ ինչպէս Մատթէոս վարդապետն ըսաւ նախորդ ժողովներէն ալ դիտողութիւններ կրնայ ուզուիլ: Իսկ գաւառներու ստանալիք փորձառութեանց գալով կերեւի թէ 40-15 տարի ալ ասոր համար պիտի սպասեմք: մինչեւ ցարդ մեր բրած փորձերն ինչպէս քաջ բացատրեց Ազգային ԷՖ հերիք են մեզ Վահմանադրութեան վերաքննութեան համար: Այս ալ յայտնի է որ պարագաներն յարատեւ փոփոխութեանց ենթակայ են, այնպէս որ ինչ որ այսօր անգործադրելի կերեւի, պարագաներու փոփոխութեամբ վաղը

գործադրելի կը դառնայ, եւ կրնան այն անտակ խնդիրներ ծագիլ, որոնք օրինաց այս կամ այն տրամադրութիւնը անգործադրելի կը թողուն, ինչպէս ուրեմն կարելի է ասոնց վերջը բերել փորձառութեան քաղաքեղով, եւ յաւիտենական օրինադիրք մը շինելու յաջողիլ: Ինչ որ կրնամք ընել ներկային մէջ մեր յառաջադիմութեան համար, զայն պէտք է ի գործ դնեմք, իսկ ասպազային մէջ հարկաւոր ըլլալիք փոփոխութիւններն ալ սպազային կը թողումք: Ար կրնենք Մատթէոս վարդապետի առաջարկութիւնը, զոր ամէնքդ ալ կը յիշէք:

S. ԱԵՒՈՆԻ Ա. ՓԻՐՂԱԼԵՄԵՆԱՆ. —

Տէրութիւնը 1863 թուականէն ի վեր Վահմանադրութիւնը չ'տրճած է մեզ, որ հինգ տարին անդամ մը վերաքննութիւն կը արամադրէ: Տաս տարիներ անցած են անկէ ի վեր, եւ սակայն տակաւին Վահմանադրութիւնը չ'եմք վերաքննած: Ժողովին մէջ ըսողներ եղան թէ այս վերաքննութեան համար տակաւին քանի մը տարիներու փորձառութիւն պէտք է, բայց եւ կըսեն՝ արդէն Վահմանադրութեան անգործադրելի մասերը փորձով ճանչցուած են, եւ հարկ չ'կայ նոր ի նորոյ փորձեր ընելու, եւ վերաքննութիւնը յետաձգելու: Իսկ Ոգոսէն է ֆ. դիտողութիւն ցոյց կուտայ վերաքննութիւնն Ընդհանուր ժողովոյ մէջ կատարելու, սակայն անկարելի է այս, եւ արդէն առաջին դիտին քանի մը յօդուածոց քննութեանը քանի մը նիստեր զօհուեցան, եւ եզրակացութիւն մը չ'ունեցաւ:

Ուստի իմ առաջարկութիւնս կրկնելով կըսեմ թէ պէտք չ'է վերաքննութիւնը յատենի Ընդհանուր ժողովոյ կատարել, այլ ինչպէս Վահմանադրութեան Ծրոյց յօդուածը կը տրամադրէ, Յանձնաժողով մը կարգել Ազգային Աարչութեան ճիւղերէն: Եւ անոր յանձնել որ փոփոխելի կէտերն որոշէ, սրբազրէ, եւ իւր անդեկագիրը բերէ Ընդհանուր ժողովին ի վաւերացումս:

ՆԱԹԱԳԱՃ ՍՐԲԱԶԱՆ. — Թէեւ անձնական տկարութիւն ունիմ եւ տրամադրութիւն չ'ունիմ խօսելու, բայց այս վերաքննութեան խնդրոյն մէջ քիչ մ'ալ եւ լոյս տալ կուզեմ ժողովոյդ:

Պահ մ'առաջ ըսողներ կըան թէ Ազգային կրօնական եւ Քաղաքական ժողովոց դի-

տողութիւնները պէտք է անուին Վահմանադրութեան անգործադրելի կէտերուն վրայ, եւ անոնց իղձը արդարացնէ: Մեր Ազգային Վահմանադրութիւնը մայրաքաղաքին մէջ խմբադրուել է, եւ այն անձանց հեղինակութեամբ որոնք աւելի Եւրոպան կը ճանչին, քան Հայաստանի աշխարհացոյցը, աւելի Եւրոպական ազգերու միտումներն ու կացութիւնը գիտեն, քան Հայաստանի մէջ բնակող մերազնէից նիւթական ու բարոյական վիճակն ու պիտոյքը, եւ այսպէս մեր Վահմանադրութիւնը Եւրոպոյ գաղափարաց վրայ ձուլուել է աւելի քան թէ Հայաստանի: Օրէնսդիրը պարտաւոր էր քննել այն ժողովրդեան վիճակը, պիտոյքն ու բարքը, որու օրէնք սահմանելու կոչուած էր, եւ այդ ժողովուրդը միայն Ուփորի մէջ չէր բնակեր, այլ այս անձուկ շրջանակէն անդին՝ Հայաստանի հեռաւոր գաւառներուն մէջ, եւ երբ տակաւին այս կերպով խմբաւորուած Վահմանադրութիւն մը մայրաքաղաքին մէջ անգամ գործադրուած աւան չ'գտարութիւններ կը ծագին, մտածելու է թէ գաւառներու մէջ ինչ հիմ կը բռնէ եւ ինչ արդիւնք կուենայ: Կըսեն թէ առաջ Վահմանադրութիւնը գաւառաց մէջ չէր գործադրուել, իսկ հիմա սկսաւ գործադրուիլ, բայց ինչպէս, ի պատասխան գաւառներէն եկած անդեկութիւնները աչքէ անցնելու է: Վերաքննութեան համար, ոչ միայն կեղծական Վարչութեան ժողովներուն գիտողութիւններն պէտք է ուզել, այլ եւ գլխաւոր գաւառական վիճակաց, ինչպէս են Վասպուրականի, Աարնոյ, Խարբերդի, եւ Սեբաստիոյ վիճակներն, Առաջնորդաց ալ պէտք է գրել որ իրենք ալ Յանձնաժողովներ կազմեն, եւ իւրաքանչիւրն իւր գաւառին պիտոյից, եւ վիճակին վրայ լոյս տան եւ Վահմանադրութեան գործադրութեան մասին իրենց դիտողութիւններն ընեն: Երէք տարի է ի վեր Պատրիարքարանի մէջ գաւառներէն անդեկագիրք կրնուին Վահմանադրութեան գործադրութեանը վրայ: Եւ ինչպէս, Ձեր զրկած հրահանգը ստացայ, կը գրէր ինձ Առաջնորդներէն մին, բայց զով ընտրեմ ժողովին ատենապետ, եւ ժողովականներն ուրկէ գանեմ, Ուրիչ մ'ալ մասնաւոր նամակի մը մէջ կը գրէր, ընտրական գործողութիւններն կատար-

ելու համար՝ ոչ քուէտուի կայ, ոչ սեղան, եւ ոչ ալ տախտակ դանոնը շինելու համար, Խնչ ընեմ: Այս ինչ գիւղացիները կրտէր նա, գրել կերդալ չ'գիտեն, այլ միայն խոփն ու արօր կը ճանչին, եւ այն է իրենց գրիչը, ինչպէս ասոնց մէջ Վահմանադրութիւն գործադրելու է: Քաղաքացւոց պարտոց տակ ճնշուել են խեղճերը, թէ որ ընտրուին ու քաղաք գան, Չօղ-պօղէն կամքն իրենց պատգամը պիտի դառնայ: Ստոյգ են վարդապետին տեղեկութիւններն, Ասիոյ մէջ գիւղացիք հարուստ քաղաքացւոց մուծիկն են, ինչպէս կըսեն ի Ռուսաստան: Եւ նամակադիր վարդապետն իւր տեղեկութիւնները վերջացնելէ ետեւ՝ Սուրբ գրոց կը դիմէր: — Վասն զի մեր վարդապետները քաղաքականօրէն իսկ բան մը բացատրելու համար սովորաբար Սուրբ գրոց կը դիմեն — եւ կըսէր թէ Աստուած անգամ արարչագործութեան ատեն, Եւրօլ լոյս, ըսաւ առաջ եւ լոյսն ստեղծեց, հետեւապէս կը յարէր թէ ժողովրդեան համար ամէնէն առաջ լոյսն է հանկաւոր, եւ թէ առանց անոր ամէն օգտակար ձեռնարկութիւն, ստուեր մ'է, որ հիմ չունի, ուստի յիշեալ վարդապետը դաւաճաբընակ ազգայնոց համար՝ լոյս, եւ Վահմանադրութեան տեսարակէն առաջ քերական կը խնդրէր:

Արդ կեղծակցնեմ խօսքս: Վահմանադրութիւնը վերաքննելու համար միայն Պոլսեցւոց կարծիքը չ'բաւէր, այլ գաւառացւոց գիտողութիւններն ալ ուզել պէտք է, եթէ ոչ ինչպէս Գերմանացիք քաղաքացւոց համար զատ եւ գիւղացւոց համար զատ գաւառագրքեր կը յօրինեն, նոյնպէս ալ մենք քաղաքին ու գիւղին համար զատ զատ օրէնքներ պէտք է սահմանեմք իւրաքանչիւրին պիտոյից ու կարողութեան չափովը:

Կըսեն թէ նախորդ Աարչութեան օրով Վահմանադրութիւնը չ'է գործադրուել գաւառաց մէջ, նախ պէտք էր որ մայրաքաղաքէն գաւառներէն անդեկագիրք կրնուին Վահմանադրութեան գործադրութեանը վրայ: Եւ ինչպէս, Ձեր զրկած հրահանգը ստացայ, կը գրէր ինձ Առաջնորդներէն մին, բայց զով ընտրեմ ժողովին ատենապետ, եւ ժողովականներն ուրկէ գանեմ, Ուրիչ մ'ալ մասնաւոր նամակի մը մէջ կը գրէր, ընտրական գործողութիւններն կատար-

տիճանը ունենայ, եւ մեր գաղափարներով հրահանգներ կուտամք անոր: Հարցուք Հայաստանի գիւղացիին, թէ ինչ ըսել է քուէ, խկոյն իւր 200 դուրիչի պարտքը կը յիշէ եւ իմ քուէն՝ իմ փոխառուիս համար է: Կրտսէ: Խնչ կրնայ ընել այսպիսի թշուառ ժողովուրդ մը, որ բանի մը վրայ գաղափար չունի, լոյս չունի եւ հետեւապէս ընտրութիւն չունի: Այս խօսքերէս չհասկցուի սակայն թէ Սահմանադրութեան գործադրութեան անկարելի է ըսել կուզեմ, ոչ երբէք, այլ միայն կը փափաքիմ որ գաւառացեաց կարծիքն ալ առնուի, եւ զէթ անոնց համար Սահմանադրութիւն պարզ եղանակի մը վերածուի: Կը փափաքիմ նաեւ որ գաւառաց մէջ լոյս տարածեմք, եւ Սահմանադրութեան թերութեանց հետ՝ ժողովուրդն ալ լուսով սրբապրեմք:

Կարողութիւն չ'ունիմ աւելի խօսելու, մանաւանդ որ քիչ մ'ալ խօսքերս ծուռ կը մեկնուին: Եր մը՝ երբ ժամանակը գայ՝ երկարորէն պիտի մեկնեմ ձեզ՝ թէ ինչ է այն շրջանակի խորհուրդը, որ երբեմն կը յիշեմ: Սահմանադրութեան շրջանակը նեղ կուգայ ըսելու, կը նշանակէ թէ մենք առաջ դացեր կ'ըմք, եւ ասոր համար է որ Սահմանադրութեան վերաբրնութեան պէտք կ'զգամք: Իսկ անոնց՝ որ կը կարծեն թէ միայն մենք այս շրջանակէն դուրս եմք, ես բացարձակօրէն կրտսեմ թէ՛ Պատրիարք, ժողովուրդ, ընտրող եւ ընտրեալ ամենքս ալ միահամուռ Սահմանադրութեան շրջանակը խրամատելով զարաուզեր եմք անկէ, բայց զմեզ անոր մէջ ցոյց տալ կը ճգնվոմք, եւ Խրիմեանի՝ շրջանակէն դուրս ելնել ուղղուեն նպատակը ուրիշ բան չէ, եթէ ոչ՝ զամենքն ալ շրջանակին մէջ մտցնել: Ահա այսչափ վասն շրջանակի:

ԱՏԵՆԱԳՊԻՐ ԷՖ. — Ինէ առաջ խօսող պաշտօնակիցներս իրենց կարծիքը յայտնեցին ներկայ խնդրոյն վրայ, եւ ամենքն ալ գրեթէ համաձայն են անոր սկզբան մասին, որ է Սահմանադրութեան վերաբրնութեան պէտքը: Բայց ուսանջ անոր ստիպողականութեան վրայ կը սխդեն, եւ ուսանք իրենց պատճառարանութիւնները մէջ բերելով քիչ մը եւս յետաձգել կառավարկեն: Այս երկու կարծիքները, կը յուսամ, եթէ չ'կարենամ ամբողջապէս համաձայ-

նեցնել, զէթ համաձայնութեան մտակցնել: Սակայն նախ Արքայական Պատրիարք Հօր ներողամտութիւնը կը խնդրեմ իւր մէկ խօսքին վրայ՝ զիտողութիւն մը ներկայացնելու համար: Շատ լաւ նկարագրեց Նորին Արքայութիւնը գաւառացեաց վիճակը, եւ Սահմանադրութեան գաւառներուն մէջ չ'կարենալ գործադրուելու պատճառները: Նաեւ խիստ բանաւոր կը գտնեմ այն խօսքը թէ « մեր Սահմանադրութիւնը յօրինողներն, աւելի Եւրոպան կը ճանչնային քան թէ Հայաստանը »: Սակայն պէտք չէ մոռնալ որ մեր Սահմանադրութեան վերաբրնութեան պէտքը միայն գաւառաց մէջ անգործադրելի ըլլալը չէ, որտէ հեղինակներն ինքնին խոստովանած են այս կէտը, երբ գործադրութեան պաշտօնին մէջ գտնուեցան: Այլ փորձը խիստ կանուխ ցրցոց թէ Սահմանադրութիւնը նոյն իսկ Պօլսոյ մէջ գործադրուելու համար՝ դժուարին կէտեր ունէր, եւ զայն օրինաւորապէս կարենալ գործադրելու համար՝ վերաբրնութեան ստիպողական պէտք: Թէպէտ եւ ասոնց վրայ խօսելու ժամանակը չէ հիմա, բայց պարզ օրինակի մը համար կրնամ ըսել թէ, այս Ժողովը ինքնին այդ պէտքը տեսեր եւ վերաբրնեց է, ինչպէս որ մեծագոյն մասի տրամադրութեան փոփոխուելին ըսածս կ'ապացուցանէ: Եթէ այդ տրամադրութիւնը փոխած չ'ըլլայինք, մինչեւ ցարդ ձեռք բերուած եւ գործադրուած կէտերն անգամ չ'պիտի կարենային գործադրուիլ:

Իմ անձնական կարծիքս այն է որ Սահմանադրութեան մէջ կէտ մը փոխելը՝ զայն վերաբրնել ըսել է, ուստի պէտք է վերաբրնութիւնն արդէն սկսուած համարիլ առանց այս կէտին վրայ խնդիր յարուցանելու, եւ առանց վերաբրնելի կէտերը հոս որոշել ուղղուէ՛ Յանձնաժողով մը կազմել եւ անոր յանձնել զայն:

Նախորդ վերաբրնութեան Յանձնաժողովը երբ իւր տեղեկագիրը բերաւ, եւ Ընդհանուր Ժողովը զայն ընդունելէ ետեւ՝ կարգը եկաւ ծրագրին քննութեան, զայն ետ թողուց, եւ Սահմանադրութիւնն յողուած առ յողուած ուղղակի ինք վերաբրնել որոշեց, տարակոյս չ'կայ թէ մեծապէս սխալեցաւ: Թերեւս ուսանք ըսեն՝ թէ այդ սխալմունքն իւր պէտքը ունէր, եւ Ժողովը զիտուութեամբ գործեց զայն:

բայց ինչ որ ալ ըլլայ պատճառը անհնար է զայն արդարացնել: Ենք՝ իրբեւ սահմանադրական ազդ մը այս տեսակ պարագաներու մէջ սահմանադրական վարչութեանց ատենական ընթացքին պէտք է բողոքովին համաձայնիմք: Երբ այս տեսակ ժողովի մը կարեւոր խնդիր մը կը ներկայանայ, իսկոյն Յանձնաժողով մը կազմուելով անոր կը յանձնուի խնդիրը: Խնչ է ասոր արդիւնքը՝ այդ սակաւաթիւ խմբին մէջ՝ որ իրարու ներհակ կուսակցութիւններէ կը կազմուի ընապէս, կարծիքները կ'ընդհարին, խնդիրը լաւ մը կը ձեւուի: Բուսինեան էֆ. ի շատիմն պէս, եւ պէտք եղածին չափ դէմ առ դէմ խօսակցելով, ու չէ թէ Ընդհանուր Ժողովոյ մէջ եղածին նման խօսելու կարգ պահուելով: . . .

Իմ պատուարժան պաշտօնակիցներէս Օդսէն էֆ. ին հարցուց թէ՛ երբ վերաբրնութեան Յանձնաժողովը ծրագրիր բերէ, միթէ Ընդհանուր Ժողովը առանց քննութեան պիտի ընդունի՞ զայն, եթէ չեմ սխալիր, ըսել ուղեց, թէ քանի որ առանց ի քննին առնելու չ'կրնար բերուած ծրագրին ընդունիլ, կրնայ ուրեմն անոր վրայ բանալիք վիճաբանութիւնն այժմէն սկսիլ Սահմանադրութեան վրայ, եւ վերաբրնել զայն ուղղակի:

Ասոր պատասխանը տրուած է կարծեմ, զոր Օդսէն էֆ. չ'յիշեց:

ԻՓԷԿՃԵԱՆ Է. ԷՖ. — (Ընդմիջելով) Այո՛, տրուած է:

ԱՏԵՆԱԳՊԻՐ ԷՖ. — (Շարունակելով) Երբ վերաբրնեալ ծրագիրը կուգայ, անշուշտ ժողովը քուէ չ'տար իսկոյն, այլ զայն ուշադրութեան կ'առնու, բայց արդէն կ'ընտրու կէտերու վրայ Յանձնաժողովոյ մէջ պէտք եղած վիճաբանութիւններն երկուստեք եղած, եւ պարզուած վիճելով Ընդհանուր Ժողովը իւր առջեւ խնդիրն ըստ մեծի մասին լուսարանուած կը գտնէ, եւ իւր քննադատութիւնը մէկ քանի գլխաւոր կէտերու վրայ միայն կ'ամփոփուի, որոց մէջ եթէ փոփոխութիւն մը մտցնել հարկ տեսնէ, զիւրիւթեամբ կրնայ ընել, եւ քուէ տալով կը վաւերացնէ, որով խնդիրը կաւարտի:

Հիմայ կը մնայ Յանձնաժողովոյ պաշտօնը շիւրացնելու միջոցն ընտրել: Սահմանադրու-

թեան ԳԳրդ յողուածը կը պահանջէ որ Յանձնաժողովը կազմուի Վարչութեան Ժողովիւրէն երնքական, Տեսուչ Խորհուրդներէն չորսական եւ Ընդհանուր Ժողովոյ մէջէն կամ դրոշն վեց անգամ ընտրելով, որով անոնց թիւը քանի կը յանգի: Բայց որքան դժար է այսքան բաղմամբիւ անգամներ ունեցող Յանձնաժողով մը գումարել, մինչդեռ եթէ սակաւաթիւ անգամներէ բաղկանայ, կրնայ թաղի մը մէջ, մասնաւոր տան մը մէջ գումարուիլ ստէպ, եւ իւր պաշտօնն աւարտել ընդ փոյթ: Ուստի կ'առաջարկեմ որ ութն անգամէ բաղկացած Յանձնաժողով մը կ'ազմուի, կրօնական եւ Վաղաքական Ժողովներէն երկերկու անգամ եւ Ընդհանուր Ժողովոյ մէջէն չորս անգամ ընտրելով, իսկ Տեսուչ Խորհուրդներն՝ ինչպէս նաեւ բոլոր զիտողութիւն ունեցողները՝ Յանձնաժողովին ներկայացնեն բանիւ կամ գրով, այն պայմանաւ որ երբ ծրագիրը գայ, վերասին խօսելու իրաւունք նին կորուսած չ'ըլլան: Իսկ գաւառներէն ստանալի տեղեկութեանց զալով այնպէս կը կարծեմ թէ՛ 1-2 տարիէն չեմք կրնար ընդունիլ զանոնք: Կան մեր մէջ այնպիսի հմուտ անձինք որ գաւառաց վրայ լիւրի տեղեկութիւններ ունին, ուստի բանաւորն այն է՝ որ մինչեւ ցարդ եղած փորձառութեանց արդիւնքով, եւ առձեռն գտնուած տեղեկութիւններով վերաբրնութիւնը կատարուի, եւ այս կերպով բաւական գործադրելի օրէնք մը կրնամք ունենալ:

Ենք տաս տարիէ ի վեր Սահմանադրութիւն մը ունիմք եւ եթէ ցարդ չ'կրցանք մեծ արդիւնք մը ձեռք բերել, պէտք չէ որ իբրտաչիմք: Գարձնեմք միանգամ աչքերնիս Եւրոպական հզօր ազգաց վրայ՝ որոց քով այնքան փոքր եմք, անոնց յառաջադիմութիւնը, երկար տարիներու եւ տքնութեանց արդիւնք, բաղադատեմք մերինին հետ, պիտի տեսնեմք որ համեմատօրէն բաւական յառաջադիմութիւն ըրած եմք սահմանադրական ընթացքին մէջ: Թող վերաբրնութեան Յանձնաժողովը վիճաբանութեան բովին մէջ՝ հարկաւոր եղած փոփոխութիւններն սահմանէ, թող վերաբրնութեան պայմանաժամը փոխանակ հինգի, երեք կամ երկու տարուց վերածուի, եւ ներկային համար հասարտ օրէնք մը ունենամք: միշտ ազգայ փորձառութեամբ վերաբրնելի, եւ չէ թէ ու-

մանց ըսածին նման արդի Սահմանադրութիւնն- նիս յօրինելու համար ապագայ փորձերու ըս- պասեմք :

Խօսքս կը վերջացնեմ բրած առաջարկու- թիւնս կրկնելով, որ է ութ անուամէ բաղկաց- եալ Յանձնաժողով մը կազմել, կէսը Ընդհա- նուր ժողովոյ մէջէն, եւ կէսն ալ Վարչու- թեան ժողովներէն ընտրելով, որ անմիջապէս ձեռնարկէ վերաքննութեան, Տեսուչ Խորհրդոց եւ երեսօրինանաց զխտողութիւնն ստանալով :

ՊԵՆՍՆԻ Թ. ԷՅ. — Կը յուսայինք որ եու- սուֆեան էֆ. խնդիրը պիտի ամփոփէր, պար- ջելով վեհաբանութեան նիւթ եղող կէտը Սահ- մանադրութեան վերաքննութիւնը կատարելու համար, տակաւին փորձառութեան պէտք կայ, թէ ոչ, ահա այս էր վիճարանութեան նիւթը, Նոյն իսկ Նախագահ Արքայանք փորձառութեան կարօտութիւնը հաստատեց գաւառներէն ըն- դունած տեղեկութիւններովը, եւ տաշակոյս չ'մնաց թէ մինչեւ ցարդ եղած փորձոց արդիւնքը հերիք չէ Յանձնաժողովոյ քայլերը զէպի դորձ- նականն առաջնորդելու, եւ թէ որքան դժուար պրածառներ ունէինք այս կէտին վրայ պնդե- լու : Արդ՝ քանի որ վերաքննութեան խնդիրը Ընդհանուր ժողովոյ ատենը ելած է, քանի որ Սահմանադրութեան Գրդ յօդուածը փորձա- ռութիւն կը պահանջէ, եւ քանի որ ասոր կա- րօտութիւնը զգալի եղած է, կարծիքները հա- մաձայնեցնելու համար՝ կըսեմ թէ Սահմանադ- րութեան Գրդ յօդուածին համաձայն Յանձ- նաժողովը կազմուի զեղջուելով անոր ան- դամոց թիւը, ինչպէս Ազարէկեան էֆ. առա- ջարկեց, եւ յանձնարարութիւն լինի անոր որ զխտողութեանց սուժար մը բանայ, զոր նա- խորդ Վարչութիւնը չէ ունեցեր, չ'հետեւապէս թէ ներկայ եւ թէ նախորդ վարչութեանց, թէ գաւառներէն եկած ու գալիք տեղեկութիւններն ու զխտողութիւններն ստանայ, արձանագրէ, եւ այսպէս փորձառութեան վրայ յենելով Սահ- մանադրութեան մէջ հարկաւոր դատուած փո- փոխութիւնները սահմանէ, եւ իւր տեղեկագի- րը բերէ Ընդհանուր ժողովոյն :

ՊԵՆՍՆԻ Թ. ԷՅ. — Կը յուսայինք որ եու- սուֆեան էֆ. խնդիրը պիտի ամփոփէր, պար- ջելով վեհաբանութեան նիւթ եղող կէտը Սահ- մանադրութեան վերաքննութիւնը կատարելու համար, տակաւին փորձառութեան պէտք կայ, թէ ոչ, ահա այս էր վիճարանութեան նիւթը, Նոյն իսկ Նախագահ Արքայանք փորձառութեան կարօտութիւնը հաստատեց գաւառներէն ըն- դունած տեղեկութիւններովը, եւ տաշակոյս չ'մնաց թէ մինչեւ ցարդ եղած փորձոց արդիւնքը հերիք չէ Յանձնաժողովոյ քայլերը զէպի դորձ- նականն առաջնորդելու, եւ թէ որքան դժուար պրածառներ ունէինք այս կէտին վրայ պնդե- լու : Արդ՝ քանի որ վերաքննութեան խնդիրը Ընդհանուր ժողովոյ ատենը ելած է, քանի որ Սահմանադրութեան Գրդ յօդուածը փորձա- ռութիւն կը պահանջէ, եւ քանի որ ասոր կա- րօտութիւնը զգալի եղած է, կարծիքները հա- մաձայնեցնելու համար՝ կըսեմ թէ Սահմանադ- րութեան Գրդ յօդուածին համաձայն Յանձ- նաժողովը կազմուի զեղջուելով անոր ան- դամոց թիւը, ինչպէս Ազարէկեան էֆ. առա- ջարկեց, եւ յանձնարարութիւն լինի անոր որ զխտողութեանց սուժար մը բանայ, զոր նա- խորդ Վարչութիւնը չէ ունեցեր, չ'հետեւապէս թէ ներկայ եւ թէ նախորդ վարչութեանց, թէ գաւառներէն եկած ու գալիք տեղեկութիւններն ու զխտողութիւններն ստանայ, արձանագրէ, եւ այսպէս փորձառութեան վրայ յենելով Սահ- մանադրութեան մէջ հարկաւոր դատուած փո- փոխութիւնները սահմանէ, եւ իւր տեղեկագի- րը բերէ Ընդհանուր ժողովոյն :

ՊԵՆՍՆԻ Թ. ԷՅ. — Սահմանադրութեան Գրդ յօդուածը կը պահանջէ որ Յանձնաժողովը քան անդամէ բաղկանայ . բայց ըստ որում Ազարէկեան էֆ. այս թիւը զեղջուելու կարեւո- րութիւնը բացատրեց, կառաջարկեմ ուրիմն որ Յանձնաժողովը 12 անձէ բաղկանայ, այսինքն Ընդհանուր ժողովոյ մէջէն չորս հօգի, կրօնա- կան եւ Քաղաքական ժողովներէն երկերկու անդամ, եւ չորս Տեսուչ Խորհուրդներէն ալ մէկ մէկ անդամ ընտրուին, ընդ ամէնը 12 հո- զի :

ՊԵՆՍՆԻ Թ. ԷՅ. — Կը կրկնեմ Պէկ- եան էֆ. ի առաջարկութիւնը .
Տ. ՄԱՏԹԷՈՍ Վ. ԻԶՄԻՐԼԵԱՆ. — Կը ձայ- նայցիմ այդ առաջարկութեան :

Ատենապետ էֆ. Յանձնաժողովոյ թուոյն

նկատմամբ եղած առաջարկութիւնը քուէի կը դնէ, եւ ժողովն ընդհանուր հաւանութեամբ կընդունի զայն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Արդ՝ ժողովը Սահմա- նադրութեան Գրդ յօդուածին տրամադրու- թեամբ վերաքննութեան Յանձնաժողովն ընդ- րելու համար՝ յայտնի է թէ յառաջիկայ նիստին պիտի ստանայ կրօնական եւ Քաղաքական ժողովոց եւ չորս Տեսուչ Խորհրդոց անդամոց ցուցակը, եւ գաղտնի քուէարկութեամբ ընդ- րութիւնը կատարէ :

Ատենապետ էֆ. յայտնելով թէ նախորդ ատենադրութեանց վրայ զխտողութիւններն հաղորդուած են գրով, եւ ընդունելութիւնը առ կախ կը մնայ, ՅՊԳ նիստէ սկսեալ մինչեւ

ՅՊԳ նիստի ատենադրութիւնները քուէի կընէ եւ ժողովը կընդունի եւ կը վաւերացնէ զա- նոնք :

Տ. ՄԱՏԹԷՈՍ Վ. ԻԶՄԻՐԼԵԱՆ. — Ազգային. Վարչութեան Խառն ժողովոյ կողմէ ներկայաց- եալ Աղթամարայ կաթողիկոսական խնդրոյն տեղեկագիրը տպագրութեամբ այսօր երեսօր- խանաց հաղորդուած լինելուն՝ կը խնդրեմ որ յառաջիկայ նիստին խնդրոց կարգին մէջ ամե- նէն առաջ անցնի :


Յառաջիկայ նիստը 15 օր ետքը դուժարեւ կորուչուի : Ատենը կը վերնայ ժամ 10 ին :

Ատենապետ էֆ. յայտնելով թէ նախորդ ատենադրութեանց վրայ զխտողութիւններն հաղորդուած են գրով, եւ ընդունելութիւնը առ կախ կը մնայ, ՅՊԳ նիստէ սկսեալ մինչեւ

Նախընթաց ԾԻ. եւ ԾԵ, նիստերու Ատենադրութեանց մէջ՝ չ'սպրդած տպագրական վրիպակաց ցանկը .
ՆԻՍ ԾԴ.

Երես	Էջ	Տող	ՍԻԱԼ	ՈՒՂԻՂ
770	Ա	36	Յորմէ հետէ եւն.	Իֆէկսեմն 4. էՅ. — Յորմէ հետէ եւն.
»	Բ	22	Կայսրութեան դաւաճան	Հայրութեան դաւաճան
772	Ա	38	Թողէ	Թողէ՛ք
773	Բ	2	Ներկայացնել	Ներկայացնող
774	Ա	42	Կոնդակին պարբերութեան մէջ	Կոնդակին երրորդ պարբերութեան մէջ
»	Բ	6	բազման	բազմաց
»	»	40	յԱստուծոյ	յ'Աստուած
»	»	»	'ի սիրտ միաբանութեան	'ի սերտ միաբանութիւն
»	»	49	լինէին	լինէին
781	Ա	40	վերաքննութեանը	վերաքննութիւնը
782	Բ	1	Արեւելեալ	Արեւելեան
»	»	35	առաջարկեց յատուկ	առաջարկեց որ յատուկ
783	Ա	3	այլ եւ	այլ եւ այլ
788	Ա	28-29	անգուն	անագան
790	Բ	2	կը տեսնես իմ	կը տեսնեմ ես
794	Բ	40	առ ջարկութեան	առաջարկութեան

ՆԻՍ ԾԵ.
վերաքննութիւնը
Արեւելեան
առաջարկեց որ յատուկ
այլ եւ այլ
անագան
կը տեսնեմ ես
առաջարկութեան



Handwritten text at the top of the page, possibly a header or introductory paragraph.


Handwritten text in the upper middle section of the page.

Handwritten text in the lower middle section of the page.

Handwritten text in the lower section of the page.

Handwritten text	Handwritten text	Handwritten text	Handwritten text	Handwritten text
Handwritten text	Handwritten text	Handwritten text	Handwritten text	Handwritten text
Handwritten text	Handwritten text	Handwritten text	Handwritten text	Handwritten text
Handwritten text	Handwritten text	Handwritten text	Handwritten text	Handwritten text
Handwritten text	Handwritten text	Handwritten text	Handwritten text	Handwritten text
Handwritten text	Handwritten text	Handwritten text	Handwritten text	Handwritten text
Handwritten text	Handwritten text	Handwritten text	Handwritten text	Handwritten text
Handwritten text	Handwritten text	Handwritten text	Handwritten text	Handwritten text
Handwritten text	Handwritten text	Handwritten text	Handwritten text	Handwritten text
Handwritten text	Handwritten text	Handwritten text	Handwritten text	Handwritten text

Handwritten text	Handwritten text	Handwritten text	Handwritten text	Handwritten text
Handwritten text	Handwritten text	Handwritten text	Handwritten text	Handwritten text
Handwritten text	Handwritten text	Handwritten text	Handwritten text	Handwritten text
Handwritten text	Handwritten text	Handwritten text	Handwritten text	Handwritten text
Handwritten text	Handwritten text	Handwritten text	Handwritten text	Handwritten text
Handwritten text	Handwritten text	Handwritten text	Handwritten text	Handwritten text
Handwritten text	Handwritten text	Handwritten text	Handwritten text	Handwritten text
Handwritten text	Handwritten text	Handwritten text	Handwritten text	Handwritten text
Handwritten text	Handwritten text	Handwritten text	Handwritten text	Handwritten text
Handwritten text	Handwritten text	Handwritten text	Handwritten text	Handwritten text



ԳԻՆ 2 ՂՈՒՐՈՒՇ

ՍԵՓԸԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՍՆՏԱ Դ Ի

Կը ծախուի ի Գիւանատան Պատրիարքարանի, եւ կը գանուի
Նկեղեցեաց բանկաները :